# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

## Բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի հունիսի 26-ին:

Նիստին մասնակցել են բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները:

**Օրակարգում՝**

1. Նիստի օրակարգի ներկայացում (զեկուցող՝ Ա.Սահակյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. Բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի անդամների հաշվետվությունների ներկայացում և մեթոդական միավորման ղեկավարի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում (զեկուցող՝ Ա.Սահակյան և մասնախմբի անդամներ):

**Լսեցին՝**

**1.** Բնագիտական առարկաներ մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց նիստի օրակարգը՝ բաղկացած 3 հարցից:

**Լսեցին՝**

**2.** Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը տեղեկացրեց, որ նախորդ նիստի որոշումների համաձայն մասնախմբի անդամները սահմանված ժամկետում կազմել և ներկայացրել են իրենց տարեկան հաշվետվությունները՝ նոր ձևաչափի պահանջներին համապատասխան: Նշվեց, որ հաշվետվությունների մշակման ողջ ընթացքում մասնախմբի ղեկավարի կողմից տրամադրվել է անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցություն: Բացի այդ վերանայվել են թեմատիկ պլանները, կատարվել է անհրաժեշտ փոփոխությունները՝ սահմանելով ավելի հստակ և իրատեսական նպատակներ և դրանց համապատասխան ակնկալվող վերջնարդյունքներ: Նշեց նաև, որ «Բնագիտություն» առարկայից 9-րդ դասարանում «Օրգան համակարգեր» թեմայով և «Ես և շրջակա աշխարհը» առարկայից 7գ դասարանում «Վայրի և ընտանի կենդանիներ» թեմայով իրականացված նախագծերի վերաբերյալ գրավոր հաշվետվությունները ներկայացվել են տնօրենին, իսկ պլանները և արդյունքը (պրոդուկտը) ներկայացվել է էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետին, որոնք էլ տեղադրվել են պաշարների շտեմարանում:

**Լսեցին՝**

**3.** Բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի անդամները և մասնախմբի ղեկավարը ներկայացրեցին իրենց տարեկան հաշվետվությունները՝ անդրադառնալով սովորողների առաջադիմությանը և ծրագրերի վերլուծությունը, կիրառված մեթոդների արդյունավետությունը, առկա խնդիրներին և հաջորդ տարվա զարգացման հիմնական ուղղություններին: Հաշվետվությունները քննարկվեցին, ստացվեցին առաջարկություններ և ծրագրեր՝ աշխատանքի բարելավման նպատակով:

**Որոշում է**

1. Հաստատել մասնախմբի 2026 թվականի հունիսի 26-ի նիստի օրակարգը:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը՝ արձանագրելով, որ նախատեսված հանձնարարականներն իրականացվել են սահմանված ժամկետներում, ապահովվել է տարեկան հաշվետվությունների ներկայացումը, թեմատիկ պլանների վերանայումը և իրականացվել է նախագծային աշխատանքի հաշվետվությունների հանձնաման ու թվային հարթակում տեղադրման գործընթացը:
3. Ընդունել ի գիտություն բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի անդամների և մասնախմբի ղեկավարի տարեկան հաշվետվությունները՝ արձանագրելով, որ ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված աշխատանքները, ապահովվել է ուսումնական ծրագրերի ամբողջական կատարումը և մեթոդական միավորման գործունեության արդյունավետ կազմակերպումը:
4. Հանձնարարել մեթոդական միավորման ղեկավարին վերջնականացնել մեթոդական միավորման տարեկան հաշվետվությունը՝ հաշվի առնելով նիստի ընթացքում ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները, և այն ներկայացնել 2026 թվականի հունիսի 30-ի մանկավարժական խորհրդի նիստում:

**Առարկայական մասնախմբի ղեկավար՝** **Ա.Սահակյան**

**Քարտուղար՝** **Ա.Խուբլարյան**

**29.06.2026**